ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3. 1961 Общественные науки

Մ. Կ. Ջուլալյան

ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ՎՐԱ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ (1555–1595 թթ.)[1]

1555 թվականին Ամասիայում կնքված հաշտության պայմանագիրը չէր նշանակում հարատև խաղաղություն Արևելյան երկու պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև: Դա, ավելի շուտ, կարճատև մի զինադադար էր: Ամասիայում կնքված պայմանագիրը չէր վերացնում երկու պետությունների միջև գոյություն ունեցող, կրոնական շղարշի տակ թաքնված, խորը քաղաքական հակասությունները: Օսմանյան Թուրքիան հարմար ասիթ էր փնտրում խախտելու պայմանագիրը և վերսկսելու իր ագրեսիվ քաղաքականությունը Արևելքում՝ ասիական ուղիների տիրապետման ու հետևաբար, ամբողջ Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում իր տնտեսական ու քաղաքական գերիշխանությունը հաստատելու համար:

Այդ ագրեսիվ քաղաքական կուրսն իրականացնելու ճանապարհին օսմանցիները և սեֆյանները Հայկական Բարձրավանդակին տիրապետելը դիտում էին որպես ստրատեգիական մեծ նշանակություն ունեցող հանգամանք:

Բրոք, թուրքական նվաճողներին առաջին հերթին անհրաժեշտ էր վերջնականապես նվաճել Հայկական Բարձրավանդակը: Եթե վերջինս մնար սեֆյանների իշխանության տակ, ապա այդ դեպքում թուրք նվաճողների համար համարյա անհնար կլիներ ամրապնդել իրենց խախտած դիրքերը Մերձավոր Արևելքի նոր նվաճված երկրներում, ուր արդեն ծայր էին առել ու դաժան կերպով ճնշվել արարների ապստամբական շարժումները: Մյուս կողմից, այդպիսի իրադրության ժամանակ հենց ինքը՝ թուրքական Անատոլիան կդառնար սեֆյանների ներխուժման մշտական վտանգի առաջ:

Սակայն սխալ կլիներ գերագնահատել Հայկական Բարձրավանդակի ստրատեգիական նշանակությունը, որպես պատերազմի հիմնական ու միակ դրդիչ հանգամանքի: Թուրք նվաճողների ստրատեգիան է՛լ ավելի հեռու էր գնում: Այդ ստրատեգիան սուր ձևով ուղղված էր նախ և առաջ Ռուսաստանի դեպի Կովկաս ու Անդրկովկաս առաջխաղացման դեմ:

Նվաճելով Անդրկովկասը, թուրքական բանակը պիտի սեպ խրեր սեֆյանների և ռուսների միջև, վերջիններին թույլ չտալով ընդհանուր բլոկ կազմել Թուրքիայի դեմ: Սկսած Ուզուն Հասանից (1453–1477), Իրանի տիրապետողները միշտ ձգտում էին դաշինք կնքել եվրոպական որևէ պետության հետ, Օսմանյան Թուրքիայի դեմ մի ընդհանուր բլոկ կազմելու նպատակով: Այս առումով Վենետիկյան ռեսպուբլիկայի հետ դիվանագիտական երկար բա-

[1] Համառոտ կերպով շարունակում ենք նույն վերնագրով ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագրի 1959 թ. № 3-ում մեր լույս տեսած հոդվածը:

նակցություններ էր վարում սեֆյան պետության հիմնադիր շահ Իսմայիլ 1-ը (1502—1524)։ Հայտնի է, որ այս հանգամանքը ստիպում էր շահին որոշ բարյացակամ վերաբերմունք ցույց տալ իր հպատակ քրիստոնյաներին, նախ և առաջ հայ լուսավորչական հոգևորականությանը։ Եվրոպայի հետ դաշինք կնքելու նպատակներ ուներ և շահ Իսմայիլի որդին՝ շահ Թահմասպը (1524—1576), չնայած վերջինի դեպի Եվրոպական պետությունները տածած մուսուլմանական ֆանատիկությանը։ Հետագայում՝ 1592 թվականին, Ռուսաստանի հետ Թուրքիայի դեմ ընդհանուր դաշինք կնքելու նպատակով, Մոսկվա ուղարկվեց Իրանի Շահ-Աբբասի հատուկ դեսպանությունը։

Ղրիմի խանների հետ թուրքական սուլթանների սերտ դաշինքն ու համագործակցությունը և նրանց նկատմամբ վարած սիրաշահական քաղաքականությունը, դարձյալ պիտի բացատրել այն վախից, որ Թուրք նվաճողները ունեին ռուսներից։

1556 թվականին Աստրախանի գրավումը ռուսների կողմից խիստ վախեցրել էր սուլթան Սուլեյմանին (1520—1566) և նրա պալատականներին։

Կազանի և Աստրախանի միացումը Ռուսական պետությանը, չերքեզների, կաբարդինցիների և այլ հյուսիս-կովկասյան շատ իշխանների կողմից կամավոր կերպով Մոսկովյան գերիշխանության ճանաչումը ցավոտ կերպով ընդունվեց սուլթանական պալատում։

Սուլթանական կառավարությունը Ռուսական պետությունից բացահայտորեն պահանջեց իր գործերը հետ քաշել նվաճված շրջաններից։ Ռուսական կառավարության կողմից թուրքական պահանջի մերժումը հասցրեց 1569 թվականի ռուս-թուրքական առաջին պատերազմին, որը թուրքերի համար վերջացավ լիակատար ձախողմամբ։

Ի՞նչ նպատակ էին հետապնդում թուրք նվաճողները, սկսելով Ռուսական պետության հետ պատերազմ։ Ինչպես ճիշտ նշում է Ն. Ա. Սմիրնովը, թուրք նվաճողների նպատակը ոչ միայն Աստրախանն ու Կազանը հետ նվաճելն էր, այլ Սեֆյան Իրանի չեզոքացումը Ռուսաստանից[3]։

Թուրքերին առանձնապես հետաքրքրում էր Աստրախանը, որը հանդիսանում էր դեպի արևելք՝ Բուխարա, Խիվա, ինչպես և դեպի Իրան տանող ճանապարհների հանգույցը։

Ռուսներից ունեցած վախը թուրքերին ստիպեց Իրանի սահմանի մոտ գտնվող Էրզրում քաղաք-ամրոցում նոր ու ամուր պաշտպանական պարիսպներ կառուցել։ Թուրք պատմագիր Մուստաֆա Սելանիկին այդ մասին գրում է, որ, իբր թե, Էրզրումի բնակիչները վախեցած Արևելքից սպասվող հարձակմանն վտանգից, «դիմում ներկայացրին Նորին Վսեմություն փադիշահին», որի համար «Արտոնություն շնորհվեց, — շարունակում է նա, — և 10 հազար արշին երկարությամբ պարիսպ կառուցելու համար քար և կիր հավաքելու ձեռնարկվեց և երկրի ռայաթների ապահովության և հանգստյան համար անհրաժեշտ շինանյութ, գործիքներ և նյութեր պատրաստվեցին և սկսե-

[2] Տես М. В. Фехнер. Торговля русского государства со странами Востока. Москва, 1952. стр. 12; Н. А. Смирнов Россия и Турция в XVI и XVII вв., Москва, 1946. стр. 140, 151 и 157.

[3] Н. А Смирнов. Россия и Турция в XVI—XVII в. в., т. 1. стр. 103.

ցին պարսպի աշտարակների կառուցելու աշխատանքները՝ 986 թվականի մուհարրեմ ամսի սկզբին (10 մարտ 1578 թ.)»[3]։

Իհարկե, վախեցողները թուրքական տիրապետող շրջաններն էին։

Մյուս կողմից՝ ինչպես նշում է թուրք ժամանակակից պատմաբան Իսմայիլ Համի Դանիշմենդը, դուրս գալով Կասպիական (Խազարական) ծով, թուրք նվաճողները հնարավորություն կունենային անմիջական շփման մեջ մտնել միջինասիական թուրքերի հետ և նրանց հետ մի ընդհանուր բլոկ կազմել «կրոնի և պետության թշնամի» Սեֆյան Իրանի դեմ[5]։

Թուրքական աղբյուրներում «Պարսկական արշավանք» անվանված պատերազմական գործողությունների անմիջական նպատակը պիտի լիներ Շիրվանն ու Վրաստանը (Գյուրջիստանը)։

Հայաստանը, որպես առանձին երկիր, ինչպես դժվար չէ եզրակացնել 16-րդ դարի թուրքական աղբյուրներից, Ամասիայի հաշտությունից հետո այլևս հաշվի չէր առնվում։

Հիշենք, որ ըստ հաշտության պայմանագրի Օսմանյան կայսրության տիրապետության տակ էր անցել Արևմտյան և Հարավային Հայաստանի ընդարձակածավալ երկրամասը, իսկ Արևելյան Հայաստանը մնացել էր սեֆյանների տիրապետության ներքո։ Մնում էր Վրաստանը, որի դերն ու նշանակությունը 16-րդ դարի երկրորդ կեսում ժամանակակից թուրք պատմագրությունը խիստ նսեմացնում է, նշելով, որ դա «զուտ աշխարհագրական» հասկացողություն է, ուր տիրում է «անարխիայի նման» մի բան։ Ուստի, թուրքական բանակի առաջ խնդիր է դրված՝ «...նախ և առաջ անարխիայից ազատել» Վրաստանը[6]։

Մյուս կողմից թուրքական բանակը պիտի ընդառաջեր Դաղստանի ու Շիրվանի ֆեոդալների «օգնության դիմումներին», ուր «...ազգաբնակչության դգալի մասը սուննի թուրքեր էին»[7]։

Այսպես է ժամանակակից թուրք պատմագրության շովինիստական տեսակետը։

Թուրքական նվաճողների այսպիսի ստրատեգիան շուտով Հայաստանը նորից պիտի դարձնեին պատերազմական գործողությունների թատերաբեմ՝ հայ ժողովրդին պատճառելով անլուր ու անասելի դժբախտություններ։

Ճիշտ է, սուլթան Սուլեյմանի մահից հետո գահ բարձրացած սուլթան Սելիմ 2-րդի (1566—1574) ժամանակ Ամասիայի հաշտության պայմանագիրը 1566 թվականի վերջերին երկու պետությունների միջև վերահաստատվեց[8]։ Սակայն այս հանգամանքը դարձյալ ժամանակավոր երևույթ էր։

---

[4] Selaniki Mustafa efendi, „Tarih-i Selaniki" (تاريخ سلانكى مصطفى افندى) Istanbul 1281 h. (1864–65) s. 145—146 «գտագործված է Ար. Սաֆրասյանի թարգմանական բաղվածքները։

[5] Danişmend İsmail Hami, „İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi", cilt 3, İstanbul, 1950, s. 16, 17, 27 և այլն։

[6] Նույն տեղում, էջ 23։

[7] Նույն տեղում, 15։

[8] M. Selaniki „Tarih-i Selaniki", էջ 80; I. Hammer „Histoire de l'empire ottoman", tome VI, Paris, 1836, p. 326.

Արդեն նշվեց, որ Սուլթանական Թուրքիան և Սեֆյան Իրանը պատեհ առիթ էին փնտրում վերսկսելու պատերազմական գործողությունները։

1571 թվականի հոկտեմբերի 7-ին Եվրոպական երեք պետությունների միացյալ նավատորմից, Լեպանտոյի ծովամարտում թուրքերի կրած ծանր պարտությունը նպաստավոր էր սեֆյանների համար։ Դա վերջիններին հնարավորություն էր տալիս պատերազմական գործողությունների նախաձեռնությունը վերցնելու իրենց ձեռքը և ներխուժելու թուրքական սահմանները։ Սակայն 1576 թվականին, շահ Թահմասպի մահից հետո, Պարսկաստանում սկսված դահակալական կռիվները վերին աստիճանի թուլացրին Սեֆյան Իրանի հզորությունը դրանով իսկ օսմանցիներին թույլ տալով խախտելու Ամասիայի հաշտության պայմանագիրը և ներխուժելու Իրանի սահմանները։ Հայաստանի համար կարճատև «խաղաղ» տարիներին նորից հաջորդեցին փոթորկոտ ու աղետալի պատերազմական տարիներ։

Այդ, այդպես կոչված, «խաղաղ» տարիները, ժամանակի գրիչները իրենց հիշատակարաններում, զարձյալ ամենամռայլ գույներով են նկարագրում։ Իրոք, դրանք այնպիսի խաղաղ տարիներ էին, երբ հայ աշխատավոր ժողովուրդը անհնա կերպով կեղեքվում էր թուրք ու սեֆեվի նվաճողների կողմից, հենելով ոնտանելի հարկերի ծանրության ու կրոնական հալածանքի տակ, ենթարկվում կոպիտ կամայականության։

1566 թվականին ոմն գրիչ իր հիշատակարանում հաղորդում է, որ նա դանձարանն տվարտել է «...ի դանութիան նեռոդաց՝ սուլտան Սուլէյմանին՝ որ մականուամբ Մոնդրար ասի, որ եւ յայսմ ամի սպանաւ ի Ցոնաց (իմա՝ Հունգարիայում — Մ. Զ.), եւ թագաւորեաց որդի իւր սուլթան Սէլիմ. եւ է աշխարհս ի վրդովումն եւ են քրիստոնեայս ի տառապանք ի ձեռս այլազգեաց (ոնգղարմը մերն է. — Մ. Զ.)»[9]։

Ինչպես արդեն նշվեց, 1578 թվականին վերսկսվեցին պատերազմական գործողությունները։ Խախտելով Ամասիայի հաշտության պայմանագիրը, օսմանյան բանակը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ ներխուժեց Արևելյան Հայաստան։ Մյուս կողմից, 30 հազարանոց Սեֆյան բանակը Թոքմաք խանի գլխավորությամբ ասպատակեց Արդահանի նահանգը[10]։

1578 թվականի օգոստոսի 10-ին (6 ջեմազուլ-ախիր 986 թ.) Զլդիրում տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ, ուր հաղթանակ տարան օսմանցիները[11]։

Ներխուժելով Վրաստանի սահմանները՝ օսմանյան բանակը մեկը մյուսի հետևից գրավեց Թումեր, Ախալքալաք բերդերը և շուտով մոտավ Թբիլիսի[12]։

Ռանապարհին ասպատակող օսմանյան նվաճողները ականատես մի գրչի ասելով՝ «Զայս ամենայն քաղաքս և գյուղաքս անմարդաբնակ արարին և «...բազում անթիւ կոտորս արարին ի մէջ քրիստոնէիցն, գորս սպանեցին, և գորս գերեցուցին»։ Սրանք հայերեն ձեռագրերի վկայություններ են, որոնք

[9] Գեղ. Մատենադարանի ձեռագիր № 6273 (Հ. Փիրղալեմյան «Ցիշատակարանք կամ նշխարք պատմութեան հայոց»), էջ 173։

[10] Ibrahim Peçevi „Tarih-i Peçevi" (تاريخ پچوى) cilt II, İstanbul 1283 h. (1870) s. 39. J. Hammer „Histoire de l'empire ottoman", tome VI, p. 80;

[11] „Tarih-i Peçevi", s. 38. „Tarih-i Selaniki", s. 146—150.

[12] Նույն տեղում, s. 42; „Tarih-i Selaniki" s. 152.

լրիվ կերպով համընկնում են թուրքական, պարսկական և վրացական պատմագիրների վկայություններին։

Այդ նույն ժամանակաշրջանում օսմանյան մի ուրիշ բանակ Ուզդեմիր Օսման փաշայի գլխավորությամբ գրավեց Հյուսիսային Ադրբեջանը և Դաղստանի մի մասը։

Հաջորդ, 1580 թվականի ամռանը Շիրվանն ու Ղարաբաղը ասպատակության ենթարկեց վերոհիշյալ Ուզդեմիր Օսման փաշայի և Ղրիմի թաթարների ու լեզգիների մեծ բանակը։

Օսման Ուզդեմիրի 1580 թվականի կատարած ասպատակությունների մասին ահա թե ինչ է հաղորդում Ըսրալել դրիչը. «...գրեցաւ... Յիսրալել սուլտանուն երիցու ի ժամանակիս, որ երեկ ազգի ազգի պատուհասն՝ մահն, սովն, սուրն, գերութիւն։ Երեկ Ուսման փաշեն Հոռոմացոց (իմա՝ թուրքերի Ս. Ղ.) Դամուր Ղապէն էաւ ի աշխարհն Շրվանայ և կոտորեաց ազգս Ղիզիլպաշին, բազում խանս և սուլթանս և արար փախստական։ Երեկ ազգ մի կայր Ղայտաղ կու ասեն և գերեաց բազում տեղիս՝ Ղարայպաղն, Ղարադաղն, Խաչէն, Վարանդալ մինչև Տիգակ»։

Ղրիմի խանը, ինչպես այդ մասին նշում է Էրզրումի դավառից Առաքել սարկավագ Սալամորեցին, Ղարաբաղից ու Շիրվանից 160 հազար գերի է տանում իր հետ, որոնց թվում և շատ հայեր. «...ետոյ ելաւ խան թաթար լերկրէն Կաֆայու, — գրում է գրիչը, — և անցաւ ի լերան Ալպուդալ և մտաւ երկիրն Շարվանայ, շատ աւէր էած և գերուց զազգս Հարկազանց։ Յետոյ թիւ եղաւ ՃԿԻ (160000) գերին տարեալ ծովուն Կաֆայու վերայ տարան ի Մսրը (իմա՝ Եգիպտոս — Մ. Ղ.) վաճառէին հաւու պէս՝ այր ու կին, ծեր ու տղայքն ի ձեռն այլ ազգի»։

Փաստորեն ամբողջ Անդրկովկասը ընկավ Օսմանյան կայսրության լծի տակ։ Գրավելով Անդրկովկասը, օսմանցի նվաճողները անհնա կողոպտում էին երկրի հարստությունները։ Միայն Բարվի նավթը թուրքերին տալիս էր «տարեկան տասը բեռ ակչե, այսինքն մեկ միլիոն ակչե (վաթսուն ակչեն մեկ ոսկի հաշվով)[15]։

Իսկ նոր նվաճված երկրներից ընդհանուր եկամուտը թուրք պատմաբանների նվազեցրած թվերով կազմում էր 25 միլիոն 200000 ակչե, այսինքն 420000 ոսկեղրուշ[16]։

Անդրկովկասի ժողովուրդները բոլորովին էլ չհաշտվեցին օսմանցի նվաճողների տիրապետության հետ։ Ապստամբություններ բռնկվեցին ոչ միայն Վրաստանի զանազան մասերում (Թորիում, Ախալցիխայում, Ախալքալակում և այլուր), այլև Դաղստանում ու Շիրվանում։

Հետագայում, 1587 թվականին թուրք օկուպանտների դեմ մեծ ապրստամբություն բարձրացրին Բորչալուում կազակ, բորչալի, ջավակ և շամսեդդին թուրքմենական ցեղերը։ Այս ցեղերը Լոռի էին տեղափոխվել իրանական շահերի կարգադրությամբ։ Վերջինները նպատակ ունեին սեպ իրել վրացիների, հայերի

[14] Գետ. Մատենադարանի ձեռագիր № 4173, 93ա. Վ. Ա. Հակոբյան. նույն տեղում։
[14] Տես Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1911. էջ 598։
[15] Danismend I. H., նույն տեղում, էջ 26։
[16] Նույն տեղում։
[17] Նույն տեղում, էջ 32։

և ազգրնջանցիների միջև, և դրանով իսկ իրագործել «բաժանիր որ տիրես» հայանի քաղաքականությունը։ Հետաքրքրական է նշել, որ Իորչալուի թուրքմենները օսմանցիների դեմ մղված պայքարում համագործակցում էին ոչ միայն սեֆյանների, այլև վրացիների հետ[18]։

Այս փաստն ավելորդ անգամ ցույց է տալիս, թե որքան անհիմն է ժամանակակից թուրք պատմագրության այն թեզը, թե իբր Անդրկովկասի մուսուլման ժողովուրդները օսմանցիներին հրավիրում էին Անդրկովկաս։ Անառարկելի է միաժամանակ և այն, որ իրոք առանձին առավել ֆանատիկորեն արամադրված մուսուլման ֆեոդալներ, վախեցած հենց իրենց ժողովրդի տրամադրություններից, դիմում էին օսմանցի նվաճողներին և ձգտում մտնել նրանց փեշերի տակ։

Քաղաքական այս խոշոր անցուդարձները և նրանց ազետալի հետևանքները հայ, ինչպես և Անդրկովկասի մյուս եղբայրական ժողովուրդների աշխատավոր մասսաների համար վառ ու կենդանի լեզվով նկարագրված են այդ տարիներին արտագրված հայերեն ձեռագրերի մի շարք հիշատակարաններում։

1578 թվականին արտագրված մի ավետարանի հիշատակարանում գրիչ Տիրատուրը Արճեշից հաղորդում է, որ ավետարանն ավարտված է «...ի թագաւորութեան տաճկաց մահմեդական ազգին՝ արևմտեան փալդշահին սուլթան Մուրատին. եւ արևելյան փալդշահին փոքր շահ Իսմայելին։ Որ երկուսն [եւս] նոր փալդշալ եկան (եղեն) յայսմիկ ժամանակիս՝ որ գհայոց ազգս ի տարտարոսի պահէին. որ միմեանց գրոհ տային թէ ի վրէդ կուգամ. նա (յայնժամ) հայոց ազգս դողային եւ հայածան լինէին յահէ անօրինացն թէ ինչ դի լինի հայերս, դեռ աստուած դիտէ դվերջն թէ ինչ լինի»։

Սակայն այդ քաղաքական իրադրությունները ամենից լավ արձանագրված են Խլաթում արտագրված մի ճառընտիրում, ուր գրիչներ Սարգիսը, Ներսեսը, Վարդանը և Հովհաննեսը հաղորդում են վերին աստիճանի հետաքրքիր տեղեկություններ և ուշագրավ մանրամասնություններ։ Հիշատակարանը ընթերցողներին ցնցում է նվաճողների կատարած չլսված ու չտեսնված վայրագությունների նկարագրությամբ, երկրի ընդհանուր ավերմամբ ու խաղաղ բնակչության մասսայական գերեվարության մասին հաղորդած մանրամասնություններով։ Այն աստիճան ողբալի են նկարագրված պատկերները, որ գրիչներն իրավամբ գրում են՝ «...ոչ կարեմք լեղուաւ պատմել, եւ ոչ դագիրն նոցա (իմա՝ թուրք օկուպանտների — Մ. Զ.) ընդ գրով արկանել»։ Ավելորդ չենք համարում հիշատակարանը մեջ բերել որոշ կրճատումով։

Գրիչները նշում են, որ ճառընտիրն արտագրված է «..ի թագաւորութեան տաճկաց՝ ի բիւզանդիայ՝ որ այժմ Ստամբոլ ասի՝ սուլթան Մուրատայ, զոր հրամայեաց նախարարաց իւրոց եւ առաքեաց ի Վան՝ առ Խոսրով փաշայն իւր, թէ «ժողովեա զդաւրս քո՝ եւ եկ գնա՝ ի վերայ կարմիր գլխոյ աշխարհին ի սահմանս Թաւրիզոյ՝ յառ ի յաւար, հար դտեղս եւ գերկիր նոցա. սպան, գերեցոյ, այրէ՝ աւերեայ եւ ի լեռս դարձիր։ Եւ յորժամ լուաւ դհրաման թագաւորին իւրոյ՝ մեծ փաշայն Խոսրով. եւ ժողովեալ բազում զօրս եւ յաւուրս պահոց Առաջաւորին՝ ասպատակեալ դիմեցին եւ գնացին ի դէպ յարևելս՝ ի վերայ դաւառաց շահին. որ կարմիր գլուխ ասի. եւ գնացեալ հասին

[18] Նույն տեղում, էջ 105։

[19] Գետ. Մատենադարանի ձեռագիր, № 6273, էջ 302—303.

մինչև ի Թավրէզ. եւ ի Նախչուան եւ զրազում քաղաքս ի զգեղս և զգաւառս աւերեալ քանդեցին. զարսն սրով սպանին. եւ զկանայսն եւ զտղայսն գերի վարեցին, եւ այնչափ անողորմ բան արարին. զի զտղայսն՝ որ որորանով կարեալ եւ ընկեցին ի վառեալ բոնիրն ի մէջ կրակին. եւ այլ ևս զի զտղայրն ի գիրկս մարցն ջամբեին զստինսն, եւ յանկարծ հասանէին ի վերայ նոցա, զմարսն սպանէին եւ արիւնն եւ կաթն իրար խառնէին. եւ ջամբէին և մանկտիրն ոչ դիտէին գվայս իւրեանց։ Եւ էր այնորիկ բրէին նիզակ եւ հարկանէին զտղայսն ի ծայրս նիզակաց և վիրացուցանէին զնիզակսն յերկինս ի վեր և հարկանէին զտղայսն ի ծայրն նիզակացն և վիրացուցեալ զնիզակսն տրնկէին զմիւս ծայրն ի գետին. և տղային ի վայրի ծայրն ազազակէին և ճչային, թալկանէին և ի սաստկութենէ ձմեռանն սառեալ մեռանէին։ Եւ այլ բազում ազգի ազգի հնարս գործեցին, զի ոչ կարեմք պատմել և ոչ զաղետսն ընդ գրով արկանել»։

Պատերազմական գործողությունների հետևանքով երկրի ընդհանուր ավերվածությունը, թուրք օկուպանտների իշխանության տարածումը ամբողջ Անդրկովկասում, ամենաբացասական ձևով անդրադառնում էր տնտեսության ու առևտրի զարգացման վրա։ Խափանվել էին Պոլիս-Թոխատ-Էրզրում-Թավրիզ, Զմյուռնիա-Թոխատ-Էրզրում-Թավրիզ, Թրաբզոն-Էրզրում-Թավրիզ հիմնական առևտրական ուղիները։ Անգլիացի ճանապարհորդ Ջենկինսոնը խոսելով Թավրիզի և առհասարակ պատերազմական ոլորտի մեջ ներգրավված քաղաքների տնտեսական անկման մասին 16-րդ դարի վերջին քառորդում, գրում է[11], որ Պարսկաստանի «մեծագույն քաղաք» «Թավրիզը»... չունի այն առևտուրը կամ վաճառականությունը, ինչ որ նախապես ուներ, կամ ինչպես ուրիշ քաղաքներն են այս ժամանակ, թուրքական արշավանքների պատճառով, որոնք Սոֆիից (իմա՝ Սեֆյան Պարսկաստանից—Մ. Զ.) գրավել են գրեթե մինչև հիշյալ Թավրիզ քաղաքը»։

1580 թ. գարնանը օսմանյան բանակը Էրզրումից շարժվեց դեպի Կարս և կառուցեց քաղաք-ամրոցը՝ հակառակ Ամասիայի հաշտության պայմանագրի, որով նախատեսվում էր ամայի ու անմարդաբնակ թողնել Կարսի քաղաք-ամրոցը, որպես սահմանային դեմարկացիոն գոտի։ Դրանով օսմանցիները ձգտում էին ավելի բորբոքել պատերազմական գործողությունների հուրը։

Կարսի ամրոցի կառուցման մասին վերոհիշյալ հիշատակարանում մենք կարդում ենք հետևյալը՝ «...Եւ յորժամ հասաք ի համբարձումն. առաքեաց թագաւորն Մուրատ զմի ի գլխաւոր փաշայից իւրոց, որ մականուն Հալալ փաշայ կոչի ՀԻ (70.000) արամբք՝ ի մեծ քաղաքն յԱրզրում. թէ գնալ եւ շինէ զԿայսր (Կարս) քաղաք. որ ի բազում ժամանակաց աւեր էր. զի սինոս (սահման) է երկու թագաւորացն։ Եւ նա եկեալ եւ բնակեցան ի դաշտն Բասենու և հրաման ել յաշխարհս. եւ ժողովիցան բազում ճարտարք եւ քարագործք, և ձեռնարկեալ շինեցին զբերդն եւ զքաղաքն առ ի հակառակութիւն Կարմիր Գլխանն»[22]։

---

[20] Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ», (տես. Գ. Սրվանձտյան, «Թուրոս ագրարդ», մասն բ., էջ 268—269) հատ. 2-րդ, Երևան, 1956, էջ 231։

[21] Հովհաննես Հակոբյան. «Ուղեգրություններ», հ. ա. Երևան, 1932, էջ 378։

[22] Ըստ թուրքական աղբյուրների, Կարս բերդ-ամրոցը կառուցվել է թուրքական բանակի կողմից։ Այսպես, պատմագիր Մ. Սելանիկին գրում է. «Վերոհիշյալ տարում (1580 թ.) Տեղեկագիր, 3—4

16-րդ դարի իտալացի ճանապարհորդ Վինչենցո դ'Ալեսանդրիի վկայությունից երևում է, որ 16-րդ դարի կեսերից ամայի էր դարձված ոչ միայն Կարսը, այլև թուրք-պարսկական սահմանի մոտ եղած այլ շրջանները։ Նա գրում է. «Թագավորի (իմա՝ շահ Թահմասպի — Մ. Ջ.) ուժը կայանում է նրանում, որ նա երկիրը ավերակ է դարձրել թուրքական սահմանների վրա՝ ամեն կողմ վեց օրվա ճանապարհ հեռավորությամբ, և շրջանում քանդած է բոլոր ամրոցները, որպեսզի դորացնել իր դիրքերը և թուրքերը հակում չունենան գրավելու և պահելու այնտեղ»։

Կարսի ամրոցի վերանորոգման աշխատանքներին զուգընթաց օսմանյան մի ուրիշ բանակ այդ նույն տարին ասպատակում էր Արևմտյան Վրաստանը, ուր բռնկվել էին բազմաթիվ ապստամբություններ։ Վրացական զորքերը մգելով հերոսական պարտիզանական կռիվներ թուրքական օկուպանտների դեմ, 16-րդ դարի քուրդ պատմագիր Շերֆեդդինի ասելով «...զգալի փոսաներ էին հասցնում մուսուլմաններին (իմա՝ թուրքական նվաճողներին — Մ. Ջ.)»[34]։

Անակնկալ հարձակումներով օսմանյան բանակին լուրջ փոսաներ էր հասցրնում շահ Թահմասպի որդի, երիտասարդ և տաղանդավոր զորավար Համզա Միրզան՝ իր ոչ մեծաթիվ ջոկատով։ Այդ նույն ժամանակ պարսկական մի ուրիշ բանակ Իմամ Կուլի խանի գլխավորությամբ պաշարեց Թրիլիսին, հրի ու կողոպուտի մատնեց քաղաքը։ Իսկ օսմանցիները իրենց հերթին Անատոլիի բեկլերբեկ Ջաֆար փաշայի գլխավորությամբ ասպատակեցին Երևանի գավառը, ավարի ու ավերի մատնելով Երևան (Ռևան) քաղաքը։ Տեղի հայ և Ադրբեջանի բնակչությունը գերության մատնվեց։

Այդ նույն հիշատակարանում Ջաֆեր փաշայի Երևանյան ասպատակությունների մասին ասված է հետևյալը «...և յորժամ աւարտեցաւ քաղաքն (իմա՝ Կարսի ամրոցի կառույցը — Մ. Ջ.) քարոգն հնչեաց, եւ ասպատակեալ գնացին դէպի յԱրևելս ի յերկիր Կարմիր գլխոյն՝ մինչ քան զքսան աւուր ճանապարհն աւելի, ի Կարսայ ի յԵրևան, ի Շրան մինչ ի մեծ թագաւորանիստ քաղաքն Տփխիս։ Զայս ամենայն քաղաքս և ի գաւառս անմարդաբնակ

«կռվեցին Կարսի բերդի վերանորոգման և նրա կարիքների ապահովման աշխատանքները։ Հաղթական բանակին պետության կողմից խիստ ու նվիրական հրամաններ ուղարկվեցին...»։ Այդ նվիրական ժամին բերդի կառուցումն սկսեցին և գինվորները բեյլերբեյերին (իմա՝ թուրք բարձրաստիճան ֆեոդալներին — Մ. Ջ.) ծառաներ (գուլեր) նշանակվեցին. պղտությունը համար քշնամու կողմը պահակներ ուղարկվեցին։ Կարճ ժամանակում մեծ եռանդով բերդի աշտարակների և պարիսպների կառուցումն ավարտվեց» („Tarih-i Selaniki", s. 153—154).

Թուրք պատմագրի այս վկայությունը, ինչպես կարելի է եզրակացնել վերոհիշյալ հիշատակարանից, ամբողջովին ճիշտ չի կարող լինել։ Հիշատակարանում պարզորեն գրված է. «...և Ժողովեցան բազում ճարտարք և բարագործք։ Բերդը, հավանականորեն կառուցվել է տեղական բնակչության բռնի աշխատանքի լծման միջոցով։ Դա 16-րդ դարում Օսմանյան կայսրության մեջ ամենատարածված երևույթներից մեկն էր։

Հովհ. Հակոբյան «Ուղեգրություններ», հատ. III, էջ 352։

[34] „Chéréf-Nameh ou fastes de la nation kourde par Chéréf-Ouddine prince de Bitlis", tome II, 1ere partie SPB 1875, p. 647—648.

Սրբեմն Քարքլիի Սիմոն թագավորը, միացած Երևանի և Գյանջայի խանների զորքերի հետ, ամենուրեք հետապնդում էր թուրքերին։ (Տե՛ս Chéréf-Nâmeh", tome II, 1ere partie, p. 648—649, 657 etc. M. Brosset, „Histoire de la Georgie", tome II, liv. I, p. 28—29, 152, 348, 447 etc.

արարին, եւ զմեծ աթոռն սուրբ Լուսաւորչին՝ սուրբ Էջմիածինն ցիր և ցան արարին. զկաթողիկոսին եւ զմիաբանին. եւ աւուր միում գնացեալ ի վերայ Երեւան քաղաքին. եւ բերին (գերի) ոգիք ԻԴԻԿ (24.000) քահանայք եւ ռամիկք, կանայք եւ տղայք»։

1584 թվականի Բաղեշի գավառի Գոր գյուղում ոմն գրիչ իր հիշատակարանում լրացնում է մեր գիտելիքները «Հայոց աշխարհի» ավերման ու ավարման մասին։ Գրիչը հաղորդում է, որ Հայաստանն արտագրված է «...ի թագաւորութեան թախտին խոնդքարի սուլթան Մուրատ խանին, որ առաքեալ զզաւրս իւր որք ելին ի յարեւելս և դիմեցին ի վերայ քրիստոնէիցն եւ աւերեցին զՀայոց աշխարհն. զվերին կողմն արեւելից և արին զԵրեւան եւ տիրեցին և զայլսն ամենայն աւերեցին և գերեցուցին. եւ շատ անձինս քրիստոնէից ի սուրն քարշեցին եւ բազում սրբութիւնս աւերեցին եւ քարահատակ արարին եւ գեռեւս կամին առնել. բայց զպատիժն նորա կրեցին»։

Թուրք պատմագիր Սելանիկին, խոսելով Ջաֆար փաշայի երևանյան արշավանքի մասին, Երևանի ու նրա շրջակայքի ավերումն ու թալանումը ամբողջությամբ վերագրում է Երևանի սեֆյան բեկլերբեկ Թորմաք խանի կամայականություններին։ Այսպես, նա գրում է. «Իսկ գգվելի Թորմաք խանը նախապես տեղեկանալով այս մասին (իմա՝ թուրքական բանակի դեպի Երևան արշավանքի մասին — Մ. Ջ.), փախուստի է դիմում, նախապես կողոպտելով ու թալանելով [Երևան] քաղաքն ու շրջակայքը։ Այսպիսի անավոր կողոպուտի, թալանի ու հրդեհման ենթարկված Երևանի բնակիչների ողբն ու կոծը, նրանց թափած արտասուքն ու կրած թշվառությունը հայտնի դեստանի (ողբի) բնույթ ստացավ»[26]։

Թուրք պատմագիր Փեչևին երևանյան արշավանքը նկարագրելիս որոշ առումով ավելի անաչառ է։ Նրա մոտ Երևանը ավերվում է ինչպես փախուստ տված Թորմաք խանի, այնպես էլ օսմանյան բանակի կողմից[27]։

Խոսելով երևանյան բնակչության և ամենից առաջ հայերի[28] մասսայական գերեվարության մասին, Փեչևին նշում է, որ գերի վերցվածները բարձրացրին այն հարցը, թե արդյո՞ք խաղաղ բնակչության գերեվարումը օրինական է, հարց, որ մուֆտի Քեմալ-փաշա զադեն իր ֆեթվաներով (մեկնություններով) հաստատեց «օրինականությունը»։

Մուֆթին մինչև իսկ գտավ, որ «...շարիաթով թույլատրվում է գերի վերցված կանանց հետ միասին գերի վերցնել նաև նրանց փոքրահասակ երեխաներին»[29]։

---

[25] ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ (Մեսրոպ Տեր-Մովսեսյան (Մագիստրոս) գործ № 21, էջ 63). Պետ. Մատենադարանի ձեռագիր. № 6206, էջ 291 բ.։

[26] „Tarih-i Selâniki", s. 154—155.

[27] Տե՛ս, Tarih-i Peçevi, c. II, s. 58.

[28] Որ գերի վերցվածների մեծ մասը հայեր էին, երևում է ինչպես հենց իրենց թուրք ազգությունների տվյալներից, այնպես էլ 16-րդ դարի անգլիացի առևտրական-հանապարհորդ Ջոն Նյուբերի հետևյալ վկայությունից։ «Պարսկաստանի վերջին պատերազմներում (իմա՝ 1578—1582 թթ. — Մ. Ջ.) շատ բրիոտանյա գերիներ էին վերցրել Երևանում և ուրիշ տեղերում» (Հովհաննես Հակոբյան, «Ուղեգրություններ», մասն Ա, էջ 344)։

[29] „Tarih-i Peçevi", c. II, S. 58—59 (مسله) اسیر اوزن عورتلرین دینی تعقل ایلمین اولاد صغاری دخی اتالریله اسیر ایرتمك شرعا جایز اولورمی (الجواب) اولور

Ունենալով մոֆթիի նմանօրինակ ֆեթվաները, այնուհետև գրում է Փեչևին, թուրք օկուպանտներն «սկսեցին կողոպտել Երևան քաղաքն ու շրջակայքը։ Նրա (իմա՝ Երևանի – Մ. Զ.) բոլոր ոսկեգոծ և գեղեցիկ կառուցված պալատներն ավերվեցին և դետնին հավասարեցվեցին. գեղաղարդ և ոսկեփայլ ծածկերը խորտակվեցին և 20 հազարից ավելի կանանց և երեխաների գերի տարան։ Դրանից հետո իսլամական բանակը. մեծ ավարով ու ուրախ, կայսերական բանակատեղը հասավ»[31]։

Երևանի գրավման և բերդի կառուցման, եկեղեցիների քանդման մասին հետաքրքիր տեղեկություններ գտնում ենք 1584 թ. ընդօրինակած մի ավետարանի հիշատակարանում «...Գրեցաւ երկիր Բասենա, ի գեղն –|որ| կոչի Ծառս. ընդ հավանեաւ սր. խաչի վանեացս... ի թուականիս Հայոց ՌԼԳ (1584), որ յայսմ տարւոյս գնաց տարհատ Փաշայն ԳՈՌ (300.000) հնձելագաւրաւք ի վերայ Երևան քաղաքին. փախոյց գտէրն, որ նստեալ էր անդ. Մահմէտ Խանն. և շինեաց անդ նորայինն բերդ մեծ և դարմանալի, որ բաղում եկեղեցիք խաչ և տապանք քակեցին. և քարն ի բերդն տարան, քրիստոնէից աղգս ամէն թալանուեցաւ, որ առաջ քան հասանել փաշային ի քաղաքն Երևան, Թաջալ ազգն արձակեց ի վերայ քրիստոնէից ազգիս. որպես գայլք ի վերայ ոչխարաց՝ քշեցին տարան մինչև Դանճալ. ի հետ իւրեանցն և անդ թալանեցին. բազումս սպանին և բազումս գերեցին։ Եւ ես անարժ|ան| գծողս անդ թալանած, փախստական եկի և գրեցի սր. «Աւետարանս...»[32]։

1584 թ. գարնանը օսմանյան բանակը Երևանից շարժվեց Նախիջևան, այս անգամ արդեն Ուզդեմիր Օսման փաշայի գլխավորությամբ։ Վերջինիս հաջողվել էր. ինչպես մենք արդեն նշեցինք, իրեն ենթարկել Դաղստանն ու Հյուսիսային Կովկասի մի դգալի մասը. սերդար Թարհատ փաշան հետ կանչվեց իր պաշտոնից

Մարանդում ու Խոյում Համզա Միրզայի 7000-անոց փոքրաթիվ զորքը իր անակնկալ հարձակումով մեծ կորուստների մատնեց օսմանյան 200.000-անոց բանակին, սակայն օսմանյան բանակի մի ուրիշ թև 1585 թվականի սեպտեմբերի 21-ին (26 ոսմագան) պաշարեց ու գրավեց Թավրիզը. հրի ու սրի մատնելով քաղաքը։ Երեք օր երեք գիշեր քաղաքը ենթարկվում է սոսկալի կողոպտի. հրկիզման ու բնակչության մի դգալի մասը կոտորվում է։ Ժողովուրդը բողոքում է սերդարին, ասելով՝ «Կրոնի պաշտպան փադիշահին ստրուկ դարձանք. էլ ինչո՞ւ է այս անկթությունն ու սարսափը»[33]։

Սակայն շուտով Համզա Միրզայի ջոկատի նոր անակնկալ հարձակումը պարտության է մատնում թուրքերին. ճակատամարտում իր մահն է գտնում հուրախությունը մեր գրիչների՝ սերդար Ուզդեմիր Օսման փաշան (29 հոկտեմբեր, 1585 թ.)։

---

[31] Tarih-i Peçevi, c. II, S. 59 بو فتاوی صوجبنجه اناطولی بکلربکسی جعفر پاشای سروار... ایروب عسکرلریله قوشوب روان سعتله گونوروی سرایلری حاکه برابر بیقریلر و اول منقش و مذهب طاق ورواقلر یاقلری و دکرمس بیندن زیاده اطفال ونساسی اسیر قلندی اندن عسکر اسلام ظفر ایروب غانم و شاد کام معسکر همیونه و اصل اولرلر.

[32] Էջմիածին, 1950, 11–12, էջ 87 (Մանր ժամանակագրություն), հ. բ. էջ 282։

[33] Danismend I, II հիշված աշխատություն, էջ 86–87։

Ողնորված հաղթանակով, Համզա Միրզայի զորքը գրավում է Երևանի, Վանի և Թրիլիսիի նահանգները։ Օսմանցիների համար դրությունը դառնում է կրիտիկական։ Նորից օսմանյան բանակի գերագույն հրամանատար (սերասկեր) է նշանակվում Ֆեռհատ փաշան։ Դրությունը օսմանցիների համար այն աստիճան անբարենպաստ էր, որ վերջինս 1586 թվականի գարնանը դալով Էրզրում, չհանդգնեց նոր արշավանք ձեռնարկել դեպի Պարսկաստան։

Սակայն Իրանում ծայր առած ներքին միջցեղային կռիվները և նոր պատերազմը Արևելքում՝ ուզբեկների հետ, բացատրում են այն հանգամանքը, թե ինչո՞ւ օսմանյան բանակի պարտությունից հետո հաղթանակը նորից մնաց օսմանցիների ձեռքը։

1588 թվականին (996 թ.) Ֆերհատ ու Ջաֆար փաշաների զորքերը երկու անգամ ասպատակում ու ավերում են Երևանի ու Նախիջևանի նահանգները[31]։

Թե ինչ հետևանքներ ունեցան քաղաքական այս իրադրությունները պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմ դարձած Հայաստանի և հայ ժողովրդի համար, վկայում են այդ տարիներին գրված մի շարք հիշատակարանները։

Այսպես՝ Կարապետ եպիսկոպոսը Արճեշից 1585 թ. արտագրում է մի ավետարան՝ «Ի գառն և եւ ի նեղ ժամանակիս՝ ի բռնակալութեան ժամանակին արեւելեան փայդշահին շահ Խուդաբանդին, եւ արեւմտեան փայդշահին սուլթան Մուրատին, որ տասներկուսարի է աշխարհս ի տարտարոս ի ներսէ. դեռ Աստուած գիտէ թէ վերջն յուր կուգնայ։ Եւ ելեալ ի Լ՚ստմպոլայ, վեզիր փաշա մի Ասման անուն ի վերայ Արկրոմա. գնաց երեալով և աւերելով եւ գհայոց ազգս կողոպտելով՝ գնաց ի շահաստան ի Թարեզ եւ ի տեղն բերդ հաստատեաց եւ ինքն [անդ] սատկեցաւ եւ հեծելազօրքն անգլուխ ի յետ դարձան, եւ եկեալ գծովու բոլորս (Վանայ) երեալով եւ աւերելով՝ եւ գհայոց ազգս կողոպտելով և զորն բռնէին իսկանջէին և զորոյ պահած և թագուցած կեր թէ ի հացէ. թէ փարթալէ. թէ ինչ որ գումանք (կասկած) ունէին զամէն ի ձեռներն տային. դեռ չին ազատիր. և զորն ֆար ու ֆասատ ունէին. եւ գհայոց ազգս խիստ դառն ու դիժար նէղէին. միթէ Աստուած գվէրջն բարի առնէ և գհայոց ազգս ազատէ»[32]։

Պատերազմական գործողությունների անմիջական հետևանքը սոսկ ու համաճարակն էր։

Սովի ցնցող նկարագրությունը արված է Հովհաննեսիկ Մառեցի գրչի և ուրիշների մոտ. «Ի սոյն ամի (1580 թ.),— գրում է գրիչը,— ընդ երկուց պատժոյս՝ մահուն և սրոյն՝ եղեւ անագին եւ անասելի սով սաստիկ, այսինքն՝ մինչ մարդիկ զագանապէս անկան ի համբերութիւն վասնզորդ մեռելոյն ի մահոյն եւ վասն անինչք եւ անյարկ շրջելոյն ի գերչացն»[33]։

Որ սովը պատերազմական գործողությունների անմիջական հետևանք էր, երևում է Հովհաննեսիկի հետևյալ տողերից. «...Քանզի ամենայն գաւառք Հայոց,— գրում է նա,— որ ընդ իշխանութեամբ կարմրագլխոյն կայր, քակեալ աւերեցաւ։ Եւ թէ ուրէք յանկեան մեռեալ լիներ շինութիւն գետեղէին

[31] Նույն տեղում, էջ 11։

[32] Գետ. Մատենադարանի ձեռագիր № 8939, էջ 274ա—274բ, ձեռագիր № 6273, էջ 317—318։

[33] Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ», հատոր բ, էջ 243։

տնանկք և մերկք. այրք և կանայք, ծերք և երիտասարդք, տղայք և յաղ-
ջրկունք. և առանց յԹեանի արտասուալից գիմօք շրջէին ի դրունս յոտարաց
և յերԹս այլոց. առ ի խնդրել ղկերակուր յանձանց իւրեանց...»[38]:

Սոված մասսաներն ստիպված դիմում էին խոտակերության, հիվանդա-
նում ու մահանում։

«Եւ իրրև եղև գարունն,— շարունակում է մեր գրիչը,— սփոեցան յաղ-
քատքն ի յերեսս դաշտաց, սնացեալ մարմնով որպէս գերամակս յայծեաց և
իրրև ղջոլորիրս, հօտից. ուտելով դրանջարս վայրի և դիտոս կանաչ, և ոչ
յագենային, քանզի կոչեցեալ էր յերկիր սով և զօրութիւն հացի բեկեալ ըստ
մարգարէին։ Սովի սաստկությունը տեղ-տեղ տեղի տվեց մարդակերության։

«Եղուր թշուառականիս,— գրում է մեր գրիչը,— և պատմութեանս եղ-
բարք քանզի բազում ի պիղծ մսէ գազիր շանս և կատուաց կամար յուգեալ
(մորթեալ) եղեն և մարմնոց մարդական եւս»[39]։

Մենք արդեն նշեցինք, որ Պարսկաստանում ծայր առած ներքին դահ-
կալական կռիվները վերին աստիճանի թուլացրին Սեֆյան պետության հզո-
րությունը։ Այս դրությունը հնարավորություն տվեց թուրքերին, կարճ ժա-
մանակվա ընթացքում (1587—1590) նվաճել ամբողջ Անդրկովկասը։

1587 թ. հունիսին Պարսկաստանի գահին տիրացավ երիտասարդ ու հեռա-
տես Շահ-Աբբասը։ Հաշվի առնելով իր երկրում ստեղծված կրիտիկական դրու-
թյունը (շամլու, ռումլու, ուստաջլու, զուլքադիր թուրքմենական ցեղերի առաջ-
նորդների ապստամբությունը ծայր աստիճան քայքայել էին երկիրը), նա
դիմեց թուրքերին՝ հաշտություն կնքելու համար։ Շահ-Աբբասի նպատակն էր
ժամանակավորապես շունչ քաշել, արյան մեջ խեղդել ամբողջ ցեղապետների
դիմադրությունը, հոգալ երկրի ռազմական հզորության մասին, և վերջապես,
վերսկսել պատերազմական գործողությունները օսմանցիների դեմ, վերածե-
լով ամբողջ Անդրկովկասը հրի ու սրի, իսկ բնակչությանը՝ մասսայական գե-
րեվարության ու բռնի տեղահանման։

Պոլսում տեղի ունեցած երկար բանակցություններից հետո, 1590 թ.
մարտի 21-ին Արևելյան երկու պետությունների միջև կնքվեց նոր հաշտու-
թյան պայմանագիր։ Ըստ պայմանագրի, օսմանցի նվաճողների արյունոտ
տիրապետության տակ անցավ ամբողջ Անդրկովկասը և Հարավային Ադրբե-
ջանը՝ Թավրիզի հետ միասին։

Այսպես էր իրադրությունը Հայաստանում 16-րդ դարի մայրամուտին։

---

[38] Նույն տեղում, էջ 243։

[39] Վ. Ա. Հակոբյան «Մանր ժամանակագրություններ», հատ. բ, էջ 243։